

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Աստանա, 2013 թվականի մայիսի 29)

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի վրա (այսուհետ՝ Պայմանագիր),

նպատակ հետապնդելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովին և Կողմերին տրամադրել պաշտոնական վիճակագրական տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իրենց գործունեությունը և Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի համար իրավապայմանագրային հիմք հանդիսացող միջազգային պայմանագրերի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումների իրականացումը դիտանցելու համար,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով գործածվում են հետևյալ հասկացությունները՝

«Կողմերի լիազոր մարմիններ»՝ պետական մարմիններ, այդ թվում՝ Կողմերի ազգային (կենտրոնական) բանկերը, որոնց վերապահված են Կողմերի պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձեւավորման գործառույթները,

«Կողմերի պաշտոնական վիճակագրական տեղեկություններ»՝ Կողմերի լիազոր մարմինների կողմից ձեւավորվող վիճակագրական տեղեկատվություն՝ վիճակագրական աշխատանքների ազգային ծրագրերի շրջանակներում և (կամ) Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն,

«Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի պաշտոնական վիճակագրական տեղեկություններ»՝ վիճակագրական տեղեկատվություն, որը ձեւավորվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից՝ Կողմերի կողմից ներկայացված պաշտոնական վիճակագրական տեղեկությունների, միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված պաշտոնական վիճակագրական տեղեկությունների եւ Կողմերի օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա:

Հոդված 2

Սույն պայմանագրի դրույթները չեն տարածվում պետական գաղտնիքի դասվող՝ Կողմ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների վրա կամ այն տեղեկությունների վրա, որոնք Կողմերի օրենսդրության համաձայն սահմանափակ տարածում (հասանելիություն) ունեն:

Հոդված 3

Եվրասիական տնտեսական հանձնաժողովն իրականացնում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի պաշտոնական վիճակագրական տեղեկությունների հավաքագրում, կուտակում, համակարգում, վերլուծություն եւ տարածում, որոնք բնորոշում են Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի գործունեությունը եւ զարգացումը, ներկայացնում է նշված տեղեկությունները Կողմերից ստացված պահանջի դեպքում, ինչպես նաեւ սույն պայմանագրի շրջանակներում համակարգում է Կողմերի լիազոր մարմինների տեղեկատվական եւ մեթոդաբանական փոխգործակցությունը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը տեղադրում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի պաշտոնական վիճակագրական տեղեկությունները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ համացանցում:

Հոդված 4

Եվրասիական տնտեսական հանձնաժողովն իրականացնում է Կողմերի վիճակագրական մեթոդաբանության ուսումնասիրություն եւ վերլուծություն՝ նպատակ ունենալով առաջարկներ մշակել Կողմերի կողմից միասնական, միջազգային մակարդակով համեմատելի չափանիշների կիրառում մշակելու ուղղությամբ, այդ թվում Կողմերի կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացվող պաշտոնական վիճակագրական տեղեկությունների դասակարգման եւ մեթոդաբանության առումով:

Հոդված 5

Կողմերի լիազոր մարմինների կողմից պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ներկայացումը Եվրասիական տնտեսական հանձնաժողով իրականացվում է վիճակագրական ցուցանիշների ցանկի համաձայն:

Վիճակագրական ցուցանիշների ցանկը, Կողմերի կողմից պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ներկայացման ժամկետները եւ ձեւաչափը հաստատվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից՝ Կողմերի լիազոր մարմինների համաձայնությամբ:

Կողմերի լիազոր մարմինները տեղեկացնում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ պաշտոնական վիճակագրական տեղեկությունները սահմանված ժամկետում ներկայացնելու անհնարինության մասին:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովն իրավունք ունի Կողմերի լիազոր մարմիններից պահանջել այլ պաշտոնական վիճակագրական տեղեկություններ, որոնք ներառված չեն վիճակագրական ցուցանիշների ցանկում:

Հոդված 6

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը Կողմերի լիազոր մարմինների համաձայնությամբ իրականացնում է վիճակագրական ցուցանիշների ցանկի թարմացում:

Հոդված 7

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը ժամանակավոր կիրառվում է դրա ստորագրման պահից 60 օր լրանալուց հետո:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով Կողմերի կողմից Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու ամսաթվից:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կուղարկի իր հաստատված օրինակը:

Կատարված է Աստանա քաղաքում, 2013 թվականի մայիսի 29–ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն լեզվով:

(Ստորագրություններ)